*Հավելված N 2*
*ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*
*2026թ. հունիսի 22-ի N 1.1 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026թ. հունիսի 22-ի N 1.1 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ**-26/33

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ**: Ընթացակարգի հրավերում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն և տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն**: Ընթացակարգի հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը փոփոխվել և հաստատվել է համաձայն կից ներկայացված Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում**: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը*** | չ/մ | միավոր գինը | ընդհանուր գինը | Ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը* |
| 1 | 34351200/502 | Անվադող համասեզոն՝ «MAN» | | Օդաճնշական դողեր նախատեսված 275/70R22.5 MAN LIONS CITI 12C ավտոբուսների համար, համասեզոնային, առանց օդախցիկի, կառուցվածքը-ռադիալ, պահպանաշերտի գծանկարը՝ ունիվերսալ, նախատեսված բոլոր առնիների համար: Անվադողը պետք է շահագործվի բոլոր եղանակների դեպքում: Անվադողի վրա պետք է նշված լինեն՝ Speed index՝ ոչ պակաս J(100), LOAD index ոչ պակաս 152/148; MAX.LOAD ոչ պակաս 3550/3150 կգ: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ պակաս 2025-2026թթ: Գործարանային վազքը | հատ | 220,000.00 | 116,600,000.00 | 530 | ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9, Թևոսյան 12, Ք. Քըրքորյան 16 | 530 | Պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող պայմանագրի/համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ ըստ Պատվիրատուի պահանջի 30 օրացուցային օրվա ընթացքում, պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | (երաշխիք) ոչ պակաս 80 000 կմ: Օրիգինալ բարձր պրեմիում որակի ըստ MAN գործարանի հաստատված կանոնակարգի՝ երաշխիքի տրամադրման պարտադիր պայմանի, բացառձակապես՝ MICHELIN ֆիրմայի THE MICHELIN X INCITY EV Z մոդելի, YOKOHAMA ֆիրմայի 120U մոդելի, GOODYEAR ֆիրմայի URBANMAX MCA մոդելի, CONTINENTAL ֆիրմայի Conti Urban HA 5 մոդելի, PIRELI ֆիրմայի U02 մոդելի, ապրանքանիշերի: Անվադողերը պետք է լինեն նոր չօգտագործված: Գույնը սև, փոխադրումը և բեռնաթափումը մատակարարի կողմից: | | | | | | | նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները |

* Սույն գնման ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

** Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայցվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մոդել ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում:

***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջների համաձայն ցանկացած հղման դեպքում կիրառելի են «կամ համարժեք» բառերը: